«Այբ կրթական հանգույց» հիմնադրամ
Երևան 0052, Թբիլիսյան խճ. 11/11
Հեռ.՝ +374 60 500 456, +374 94 546 498
welcome@aybschool.am
www.aybschool.am

Արձանագրություն
№ ASBT05-2110-C (3009)

**«Այբ կրթական հանգույց» հիմնադրամի 5-րդ գումարման հոգաբարձուների խորհրդի նիստի**

| | |
|---|---|
| Ամսաթիվ՝ | 30 սեպտեմբերի 2021 թ. |
| Անցկացման վայր՝ | «Այբ» դպրոց, ՀՀ, ք. Երևան, Թբիլիսյան խճուղի 11/11/Zoom հարթակ |
| Նիստի սկիզբ՝ | 09:30 |

**ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐ**

Հոգաբարձուների խորհրդի (ՀԽ) անդամներ՝
Ռուբեն Հարությունյան - ՀԽ նախագահ (առցանց),
Անահիտ Ադամյան (առցանց),
Անահիտ Հովհաննիսյան (առկա),
Արթուր Ալավերդյան (առցանց),
Հովհաննես Աթաբեկյան (առցանց),
Սարգիս Բադալյան (առկա),
Վասկեն Յակուբյան (առցանց):

Նիստին չի մասնակցել՝
Արիս Բերբերյան ,
Հակոբ Հակոբյան,
Տիգրան Հարությունյան:

7-րդ հարցից սկսած Ռուբեն Հարությունյանը նիստին չի մասնակցել և նախագահությունը փոխանցել է Սարգիս Բադալյանին:

Նիստին մասնակցել են հոգաբարձուների խորհրդի յոթ անդամներ, ինչն ապահովում է որոշումների կայացման համար անհրաժեշտ քվորումը:

Առանց ձայնի իրավունքի նիստին մասնակցում էին.
Դավիթ Սահակյանը (գործադիր տնօրեն) (առկա),
Նիստի քարտուղար ընտրվեց Սիրանուշ Սուքիասյանը (առկա),
Ռիմմա Անանյանը («Այբ» շրջանավարտների ակումբի նախագահ), (առկա),
Նելլի Բալայանը (ֆինանսական համակարգող, մասնակցել է հարց 4-ի քննարկմանը) (առկա),
Նարինե Սարգսյանը (խորհրդատու, մասնակցել է հարց 5-ի քննարկմանը) (առկա),

| |
|---|
| Հարց 1. Օրակարգի հաստատում<br>Որոշում՝ հարց 1<br>*1. Հաստատել ՀԽ-ի նիստի 2021 թվականի սեպտեմբերի 30-ի օրակարգը:*<br>*2. Դավիթ Սահակյանի ավելացրած հարցը («Այբ կրթական հանգույց» հիմնադրամի հորգաբարձուների խորհրդի 7 /յոթ/ դասային խմբերի ներդասային ընտրությունների կանոնակարգի 3.30.1 և 3.31.1 խմբագրման վերաբերյալ) ներկայացնել առցանց քվեարկման՝ մանրակրկիտ ուսումնասիրությունից հետո:*<br><br>Որոշումը կայացված է միաձայն: |
| Հարց 2. «Այբ կրթական հանգույց» հիմնադրամի հորգաբարձուների խորհրդի 7 /յոթ/ դասային խմբերի ներդասային ընտրությունների կանոնակարգի խմբագրման հաստատում: |
| Որոշում՝ հարց 2<br>*Որոշվեց «Այբ կրթական հանգույց» հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի 7 /յոթ/ դասային խմբերի ներդասային ընտրությունների կանոնակարգում ստորև կետերը խմբագրել հետևյալ կերպ՝*<br>*3.20 Դպրոցը «Ուսուցիչների խմբի կողմից առաջադրված ներկայացուցիչ» դասային խմբի համար կազմակերպում է երկփուլ ընտրություններ, որոնց հիման վրա էլ հրապարակվում են դրանց արդյունքները:*<br>*3.20.1 ««Այբ» դպրոցի շրջանավարտ» դասային խմբի համար ներկայացուցիչ նշանակվում է Շրջանավարտների ակումբի տվյալ պահին գործող նախագահը:*<br>*3.33.1 ՀԽ կազմում ««Այբ» դպրոցի շրջանավարտ» դասային խմբի ներկայացուցիչ առաջադրվելու և ընտրության գործընթացին մասնակցելու համար՝ անձը ընտրության պահին պետք է զբաղեցնի Շրջանավարտների ակումբի նախագահի պաշտոնը:*<br>Որոշումը կայացված է միաձայն: |
| Հարց 3. Նախորդ նիստից անցած ժամանակահատվածում դպրոցի աշխատանքների մասին հակիրճ տեղեկություններ: Ուսումնական տարվա ամփոփում: «Այբ» դպրոցի Աշխատանքային պլանի առաջընթացի վերաբերյալ տեղեկություններ՝ ի հետևումն հնգամյա ռազմավարական պլանի իրականացմանը: |
| Որոշում՝ հարց 3<br>*Որոշվեց*<br>*1. ի գիտություն ընդունել Դավիթ Սահակյանի ներկայացրած հաշվետվությունը:*<br>*2. Այսուհետ հաշվետվության ամփոփումը ներկայացնել ավելի հակիրճ, պատկերավոր տարբերակով՝ առանձնացնելով աշխատանքների ստատուսը և պատասխանատուներին:*<br>Որոշումը կայացված է միաձայն: |
| Հարց 4. 2021-2022 ուսումնական տարվա բյուջեի հաստատում և ֆինանսական հաշվետվություն: |
| Որոշում՝ հարց 4<br>*Որոշվեց պայմանականորեն հաստատել 2021-2022 ուսումնական տարվա բյուջեն ըստ հավելված 3-ի՝ հունվար/փետրվար ամիսներին վերանայելու պայմանով:*<br>Որոշումը կայացված է միաձայն: |
| Հարց 5. Ծնողների և աշակերտների NSAT և NPS հետազոտությունների արդյունքների ներկայացում: |
| Որոշում՝ հարց 5<br>*Որոշվեց ի գիտություն ընդունել NSAT և NPS հետազոտությունների արդյունքները :*<br>Որոշումը կայացված է միաձայն: |

| |
|---|
| Հարց 6. Շահադրդական ծրագիր դպրոցի գործադիր տնօրենի և կառավարման երկու մակարդակ ցածր աշխատակիցների համար՝ հիմնված Դպրոցի ռազմավարական ծրագրերի զարգացման և կազմակերպչական կառուցվածքի վրա: |
| Որոշում՝ հարց 6<br>*Որոշվեց ձևավորել հանձնաժողով շահադրդական ծրագիրն ավելի մանրամասն ուսումնասիրելու և ՀԽ-ին ներկայացնելու համար: Հանձնաժողովի անդամներին ընտրել առցանց քվեարկությամբ: Հավաքագրել Հայաստանի շուկայում մասնավոր դպրոցներում աշխատավարձների վերաբերյալ տեղեկատվություն՝ համեմատելու համար:*<br>Որոշումը կայացված է միաձայն: |
| Հարց 7. Ուսուցիչների նախատեսվող և փաստացի ծանրաբեռնվածությունը՝ ըստ առարկայախմբերի ու դպրոցական մակարդակների: Ռազմավորության նոր թիրախի ձևավորման վերաբերյալ առաջարկություններ: |
| Որոշում՝ հարց 7<br>*Որոշվեց ի գիտություն ընդունել Դավիթ Սահակյանի ներկայացրած հաշվետվությունը:*<br>Որոշումը կայացված է միաձայն: |
| Հարց 8 ՀԽ-ի հաջորդ նիստի հաստատում:<br>Սիրանուշ Սուքիասյանը ներկայացրեց ՀԽ-ի հաջորդ նիստի համար ցանկալի օրը: |
| Որոշում՝ հարց 8<br>*Որոշվեց ՀԽ-ի հաջորդ նիստը հրավիրել սույն թվականի դեկտեմբերի 02-ին: Նիստին կմասնակցեն այժմ գործող և նորընտիր ՀԽ-ի անդամները:*<br>Որոշումը կայացված է միաձայն: |
| Կետ 9 ՀԽ-ի հաջորդ նիստին առաջարկվող հարցեր:<br>Բոլոր հարցերը ներկայցնել դեկտեմբերի 02-ի նիստին, եթե այլ բան չի նշված հանձնարարության վերաբերյալ: |
| Կետ 10. Նիստի ավարտ<br>Հանդիպումն ավարտվեց ժամը 12:40-ին: |

ՀԽ անդամներ

Անահիտ Ադամյան _____

Անահիտ Հովհաննիսյան _____

Արթուր Ալավերդյան _____

Հովհաննես Աթաբեկյան _____

Սարգիս Բաղալյան _____

Վասկեն Յակուբյան _____

ՀԽ նախագահ

Ռուբեն Հարությունյան _____

Նիստի քարտուղար

Սիրանուշ Սուքիասյան _____